ՃԽԼ.

Աստ ի հալէպ երկու եկեղեցի գոյ, որոց իշխանութիւնն և տէրութիւնն ի ձեռս հայոց է։ Սակայն սորա մինն որ կոչի աստուածածնայ և է փոքր ի հին ժամանակաց ռէփուփլիգային[1] է լեալ, որպէս ի նշանաց, ի գերեզմանաց և ի քարանց դրօշելոց տալեան տառիւք յայտնապէս երևի. զսա ի վաղուց ժամանակաց ձգեալ վէնէտիկցիք փախուցեալ են։ Այժմ յայսոսիկ աւուրս կպրզու պալեօզն վէնէտիկցոց եկն աստ և բնակեցաւ որպէս այլոց թագաւորաց պալեօզն։ Սա ընդ իս բարեկամ էր. յորժամ առ նա գնացի և խօսեցայ, իմացայ զխորհուրդ նորա զի կամի յետս առնուլ զեկեղեցին։ Եւ ես խնդրեցի մեզ տալ։ (Հ. Գեորգ վրդ. առ Մելգոնեան, 1754 յուլիսի 31. ի Հալէպ)։

ՃԽԸ.

Զպատկերն Աստուածաշնչին ձեռամբ իմով ետու փաշային[2] ի դիմաց Գերյարգութեանդ, և մեծապէս շնորհակալ եղև. պարգևեաց մեզ ամենայնում տարուջ հինգ հազար լիրայ աղ մենաստանին մերոյ։ Վասն պէոէվիարիումին յոյժ ցաւեցաւ զի ոչ ես յղեալ. և ես ասացի թէ նոր տպեն. և ասաց թէ բարուք է, միայն յորժամ եգերի տիպն յղեսցէ Գերյարգութիւնդ ի Պէջն. խոշոր գրով լինիցի և հաստագոյն թղթով կարգին սրբոյն պօնաւէնդուրայի Օպսէրվանցիա. որպէս յառաջագոյն գրեալ եմ. մանաւոր պաշտպան սրբոց ևս լինիցի յետոյ։ Վերստին փաշայն խնդրեաց վասն եղբայրութեան. և ես պատասխանեցի թէ Գերյարգութիւնդ սիրով ընկալեալ է և յղելոց զգիր եղբայրութեանն լատիներէն. յոյժ շնորհակալ եմ ասաց։ Զկերպն եղբայրութեան ճիզվիթաց ոչ կարացի առնուլ, բայց մինորիտականաց և ֆրանչիսկականաց առի։ (Հ. Ղազարոս առ Մելգոնեան, 1754 Սեպտ. 20. [Հայաքաղաք])։

ՃԽԲ.

Թագաւորս այս այժմեան գտեալ է ի մեծամեծ հատորս գրոց ի կարգս կայսերաց հռոմայեցւոց նստեալ երեք կայսր ազգաւ հայ։ Գտանի աստէն կնիք (սիկքէ) Լէոն թագաւորին Հայոց։ (Հ. Սահակ [Խաչատուրեան] առ Մելգոնեան, 1754, Հոկտ.ի 26. [տեղի?])։

ՃԳ.

Ցերիկեան աւուրն գնացաք կառօք յուխտ սրբոյն Լէօբոլտոս թագաւորին, և պատարագեցի անդ ականակուռ սկուռով և ասղնեգործ զգեստիւ. տեսի յեկեղեցին անդ զթագաւորն և զթագուհին, մինչև առաքեցին զսպասաւոր մի զկնի մեր տեղեկանալ թէ ուստի իցեմ ես, և տեղեկացեալ տարան զլուր առ թագուհին։ (Հ. Սահակ Խաչատուրեան առ Մելգոնեան, 1754 նոյեմբեր 16. [տեղի?])։

ՃԴԱ.

Սարգիս վ. [Սարաֆեան] աւելի քան զմի ամիս է, որ աստ ժամանեաց, փաթրիքն[3] սիրով առընկալաւ, վասն նորին զբարի ծանուցմունս արար ժողովրդին. ի մասնաւորն ոչ մտանեմ, զի

---

1. Վենետկոյ Հասարակապետութեանը կ'ակնարկէ։
2. Փաշա ըսելով անշուշտ կ'իմանայ քաղքին դատաւորը։
3. Յակոբ Բ. Նալեան Պատրիարք։